ԵՐԿԻՐ

NEWS

Արցախը փախստականներին քիչ է գրավում

ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կառավարությանն առընթեր փախստականների եւ միգրացիայի վարչության՝ օրերս տարածած հայտարարությունը՝ ԼՂՀ-ում վերաբնակեցման մասին, մեծ արձագանք է գտել Գեղարքունիքի մարզում, հատկապես մարզկենտրոն Գավառում:

Մարզպետարանի սոցիալական պաշտպանության բաժնի վարիչ Սուրեն Խաչատրյանն Արմենպրեսի թղթակցին ասաց, որ Արցախում վերկաբնակվելու համար արդեն դիմել է 12 ընտանիք: Մարզի մյուս տարածքներից առայժմ դիմողներ չեն եղել, բայց ցանկացողներ կան, տեղեկացրեց պրն Խաչատրյանը: Դիմողները հիմնականում 5-6-հոգուց բաղկացած, երիտասարդ, զարգացող համարվող ընտանիքներ են, սակայն չունեն ոչ հողամաս եւ ոչ էլ բնակարան: Արցախում նրանց հատկացվելու են բնակարաններ, եւ տրվելու են մի շարք արտոնություններ: Վերաբնակեցման պարտադիր պայմաններից մեկն այն է, որ մեկնողներն ի վիճակի լինեն եւ ցանկություն ունենան զբաղվել հողագործությամբ: Չնայած վերաբնակեցման առաջնահերթությունը տրվում է փախստական ընտանիքներին, բայց հետաքրքրականն այն է, որ մեկնելու նպատակով դիմած ընտանիքների թվում ոչ մի փախստական ընտանիք չկա:

Սոցիալական ապահովության բաժնի վարիչը հայտնեց նաեւ, որ դեռեւս հայտնի չէ այդ ընտանիքների վերաբնակեցման ստույգ ժամկետը, քանի որ փաստաթղթային ձեւակերպումները, որ կատարում է փախստականների եւ միգրացիայի վարչությունը ընթացքի մեջ են: